ՄԱՆՈՒԿ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԵԱՆԻ

Մանուկ նազելի, մանուկ դեղեցիկ,
Որքան մաքուր ես, որքան անարատ.
Հայեացքդ պայծառ, ժպիտդ քաղցրիկ,
Փթթում ես որպէս հրապուրիչ մի վարդ։

Ազատ առօրեայ դառնէն հոգսերից,
Հանդիստ ես առնում դու մօրդ կրծքին.
Ձեն յուզում սիրտդ կրքեր թունալից.
Պարզ ու պայծառ ես նայում դու կեանքին։

Կեղծ զգացմունքներ օտար քո սրտին,
Անկեղծ խնդրում ես և անկեղծ տխրում.
Անկեղծութիւնը քո չքնաղ դէմքին
Շողում է որպէս աստղը երկնքում։

Օ՛հ, մանուկ սիրուն, մանուկ նազելի,
Անմեղ, անբիծ ես, որպէս հրեշտակ.
Դու կախարդում ես մարդու միտք, հոգի։
Դու լքեալ սրտին և՛ սէր ես, և՛ կեանք։

Անսահման սիրով նայում եմ վերադ,
Եւ ինձ այրում է մի ջերմ զգացմունք—
Ա՛խ, երանի՜ չէ այդպէս անարատ
Մընայիր դու միշտ, սիրասուն մանուկ։

Մոսկվա. 23 յուլիսի, 1890 թ.